«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Մ.Ա.
«23» հունիսի 2026 թ.

ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊՕ ՎՕ Российско-Армянский университет
Իրավունքի ինստիտուտ
Институт права

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ ի.գ.դ., պրոֆեսոր Ղամբարյան Ա.Ս.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Սուբյեկտիվ իրավունքից հրաժարման տեսություն

Մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

1. **Դասընթացի անոտացիան**

«Սուբյեկտիվ իրավունքից հրաժարման տեսություն» դասընթացը նվիրված է ժամանակակից իրավագիտության առավել արդիական և տեսականորեն բարդ հիմնահարցերից մեկի՝ սուբյեկտիվ իրավունքից հրաժարման ինստիտուտի համակողմանի ուսումնասիրությանը։ Դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են իրավունքից հրաժարման պատմական, տեսական, իրավափիլիսոփայական և համեմատաիրավական հիմքերը, ինչպես նաև դրա դրսևորումները սահմանադրական, քաղաքացիական և քրեական դատավարական իրավունքում։

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում մարդու հիմնարար իրավունքներից հրաժարման իրավաչափության պայմաններին, սուբյեկտիվ իրավունքի իրականացման սահմաններին, անձի ինքնավարության և հանրային շահի փոխհարաբերությանը, ինչպես նաև Եվրոպական մարդու իրավունքների դատարանի և ազգային դատարանների իրավակիրառ պրակտիկային։

Դասընթացը նպաստում է ուսանողների տեսական գիտելիքների խորացմանը, վերլուծական մտածողության զարգացմանը և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իրավական հիմնահարցերի մասնագիտական գնահատման կարողությունների ձևավորմանը։

2. **Դասընթացի նպատակը և խնդիրները**

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին փոխանցել սուբյեկտիվ իրավունքից հրաժարման տեսության վերաբերյալ համալիր գիտելիքներ, ներկայացնել դրա իրավաբանական բնույթը, իրավափիլիսոփայական հիմքերը, իրավակարգավորման առանձնահատկությունները և ձևավորել համապատասխան իրավական վերլուծության կարողություններ։

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խնդիրները.

• ուսումնասիրել սուբյեկտիվ իրավունքից հրաժարման տեսական հիմքերը,

• ներկայացնել իրավունքից հրաժարման պատմական և իրավափիլիսոփայական զարգացումը,

• վերլուծել սուբյեկտիվ իրավունքից հրաժարման հասկացությունը, տեսակներն ու ձևերը,

• ուսումնասիրել իրավունքից հրաժարման իրավաչափության պայմանները,

• ներկայացնել մարդու հիմնարար իրավունքներից հրաժարման առանձնահատկությունները,

• ուսումնասիրել դատական պաշտպանության, հակընդդեմ հարցման, բնակարանի անձեռնմխելիության և հաղորդակցության գաղտնիության իրավունքներից հրաժարման իրավական կարգավորումները,

• ձևավորել միջազգային և ներպետական դատական պրակտիկայի վերլուծության կարողություններ,

• զարգացնել իրավական փաստարկման և մասնագիտական քննարկումների հմտությունները։

3. **Դասընթացի օբյեկտը և առարկան**

Դասընթացի օբյեկտը

Դասընթացի օբյեկտն են սուբյեկտիվ իրավունքից հրաժարման հետ կապված հասարակական հարաբերությունները, ինչպես նաև այդ հարաբերությունները կարգավորող իրավական նորմերն ու իրավակիրառ պրակտիկան։

Դասընթացի առարկան

Դասընթացի առարկան սուբյեկտիվ իրավունքից հրաժարման տեսական հիմքերն են, իրավական բնույթը, իրավաչափության պայմանները, իրավակարգավորման առանձնահատկությունները և դրանց կիրառման պրակտիկան ազգային ու միջազգային իրավական համակարգերում։

Դասընթացի մուտքային պահանջները

Դասընթացի յուրացման համար ուսանողը պետք է ունենա.

- իրավունքի տեսության հիմնարար գիտելիքներ,
- սահմանադրական իրավունքի հիմնական ինստիտուտների իմացություն,
- մարդու իրավունքների տեսության հիմունքների իմացություն,
- քաղաքացիական և քրեական դատավարության ընդհանուր գիտելիքներ,
- իրավական ակտերի և դատական որոշումների վերլուծության հմտություններ։

4. **Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները**

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորումը՝ համապատասխան կրթական ծրագրի և ՈԱՇ վերջնարդյունքներին։

Գիտելիքները

Ուսանողը պետք է իմանա՝

1. սուբյեկտիվ իրավունքից հրաժարման հասկացությունը, էությունը և իրավական բնույթը,
2. իրավունքից հրաժարման պատմական և իրավափիլիսոփայական հիմքերը,
3. իրավունքից հրաժարման տեսակները և դասակարգումները,
4. մարդու հիմնարար իրավունքներից հրաժարման իրավական սահմանները,
5. իրավունքից հրաժարման իրավաչափության պայմանները,
6. ազգային և միջազգային դատական պրակտիկայում ձևավորված հիմնական մոտեցումները,
7. Եվրոպական մարդու իրավունքների դատարանի նախադեպային իրավունքի հիմնական սկզբունքները։

Հմտությունները

Գիտելիքի կիրառման հմտությունները

1. վերլուծել իրավունքից հրաժարման իրավական իրավիճակները,
2. տարբերակել իրավունքից հրաժարման տեսակներն ու ձևերը,
3. գնահատել իրավունքից հրաժարման իրավաչափությունը,
4. կիրառել ազգային և միջազգային դատական պրակտիկան կոնկրետ իրավական խնդիրների լուծման ընթացքում,
5. հիմնավորել մասնագիտական իրավական դիրքորոշումներ։

Ընդհանրական իմացական հմտությունները

1. իրավական տեղեկատվության որոնում և համակարգում,
2. իրավական աղբյուրների քննադատական վերլուծություն,
3. համեմատահիրավական ուսումնասիրությունների իրականացում,
4. մասնագիտական բանավոր և գրավոր հաղորդակցություն,
5. իրավական փաստարկների տրամաբանական կառուցում։

Կարողունակությունը (կոմպետենցիան)

Ինքնուրույնությունը և պատասխանատվությունը

Դասընթացի ավարտին ուսանողը կարող է՝

1. ինքնուրույն գնահատել իրավունքից հրաժարման իրավական հետևանքները,
2. կայացնել հիմնավորված մասնագիտական որոշումներ,
3. իրականացնել իրավական հետազոտություն,

4. մշակել իրավական եզրակացություններ,
5. պահպանել մասնագիտական էթիկայի և ակադեմիական բարեվարքության սկզբունքները,
6. արդյունավետ աշխատել ինչպես ինքնուրույն, այնպես էլ մասնագիտական թիմում,
7. իրավական հիմնահարցերի վերաբերյալ ներկայացնել փաստարկված մասնագիտական դիրքորոշում:

Դասավանդման եղանակները և մեթոդները

Դասընթացի ուսումնառության գործընթացում կիրառվում են ուսուցման ժամանակակից մեթոդներ, որոնք միավորում են տեսական ուսուցումը և գործնական իրավական վերլուծությունը:

Դասավանդման հիմնական եղանակներն են՝

- դասախոսություններ,
- գործնական (սեմինար) պարապմունքներ,
- դեպքերի (Case Study) վերլուծություն,
- դատական ակտերի և իրավական փաստաթղթերի ուսումնասիրություն,
- խմբային քննարկումներ,
- շնորհանդեսներ,
- ինքնուրույն հետազոտական աշխատանքներ,
- իրավական հիմնախնդիրների լուծում:

Դասավանդման մեթոդներն են՝

- ինտերակտիվ դասախոսություն,
- խնդրահեն ուսուցում (Problem-Based Learning),
- դեպքերի ուսումնասիրություն (Case Method),
- համեմատահիրավական վերլուծություն,
- հարցուպատասխան,
- բանավեճ,
- հետազոտական ուսուցում,
- ներկայացումների պատրաստում և քննարկում:

Դասընթացը ներառված է «Կամնտրական դասընթացների կրթաբլոկում» 4 ակադեմիական կրեդիտ (144 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 34 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 4 ուսումնական տարվա 1 կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**72**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**32**
1.1.1. Դասախոսություններ	**16**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**16**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**13**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**ստուգարք**

2.3. Առարկայի ծավալը՝ 72 ժամ, կրեդիտ՝ «2» ECTS:

2.4. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1. Իրավունքից հրաժարվելու պատմական և իրավափիլիսոփայական տեսանկյունները Իրավունքից հրաժարվելը (պատմական տեսանկյունը): Իրավունքից (ազատությունից) հրաժարվելը (իրավափիլիսոփայական տեսանկյունը)	6	3	3
Թեմա 2. Իրավունքից հրաժարվելու տեսությունը	**6**	**3**	**3**

Իրավունքից հրաժարվելու հասկացությունը և ձևերը: Սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելը: Սուբյեկտիվ իրավունքն իրականացնելուց հրաժարվելու հատուկ–իրավաբանական սահմանափակումները			
Թեմա 3. Դատական նիստին մասնակցելու իրավունքից հրաժարվելը և քրեադատավարական միջամտության հարցերը Դատական նիստին մասնակցելու իրավունքից հրաժարվելը (դոկտրինալ և պատմահամեմատական տեսանկյունները): Դատական նիստին մասնակցելու իրավունքից հրաժարվելու ընդհանուր պայմանները: Դատական նիստին մասնակցելու իրավունքից հրաժարվելը մեղադրյալի միջնորդությամբ (համաձայնությամբ): Դատական նիստին մասնակցելու իրավունքից հրաժարվելը (իրավունքը կորցնելը) հակաիրավական արարք կատարելով (forfeiture by wrongdoing)	**5**	**3**	**2**
Թեմա 4. Հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքից հրաժարվելը և քրեադատավարական միջամտության հարցերը Հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքի էությունը: Հակընդդեմ հարցման իրավունքից (կոնֆրոնտացիայի) հրաժարվելու հասկացությունը և ձևերը	**5**	**2**	**3**
Թեմա 5. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվելը և քրեադատավարական միջամտության հարցերը	**5**	**3**	**2**

Բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվելը (դոկտրինալ և իրավահամեմատական տեսանկյունները): Բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվելը (հայկական իրականություն)			
Թեմա 6. Հաղորդակցության գաղտնիության իրավունքից հրաժարվելը և քրեադատավարական միջամտության հարցերը Հաղորդակցության գաղտնիության իրավունքից հրաժարվելը (դոկտրինալ և պատմահամեմատական տեսանկյունները): Հաղորդակցության գաղտնիության իրավունքից հրաժարվելու ձևերը	**5**	**2**	**3**
Ընդհանուր	**32**	**16**	**16**

Ուսումնառության ընթացքում կիրառվող ինքնուրույն աշխատանքները

Ուսանողների ինքնուրույն աշխատանքը ներառում է՝

- գիտական գրականության ուսումնասիրություն,
- իրավական ակտերի վերլուծություն,
- Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերի ուսումնասիրություն,
- իրավական եզրակացությունների կազմում,
- էսսեների և ռեֆերատների պատրաստում,
- թեմատիկ զեկույցների ներկայացում,
- շնորհանդեսների պատրաստում,
- կոնկրետ իրավական իրավիճակների (case study) վերլուծություն,
- համեմատաիրավական ուսումնասիրությունների իրականացում:

Ընթացիկ և ամփոփիչ գնահատումը

Դասընթացի ընթացքում գիտելիքների գնահատումն իրականացվում է հետևյալ ձևերով.

- գործնական պարապմունքների մասնակցություն,
- բանավոր հարցումներ,
- թեմատիկ քննարկումներ,
- դեպքերի (case) վերլուծություն,
- գրավոր առաջադրանքներ,
- ինքնուրույն աշխատանքների ներկայացում,
- շնորհանդեսներ,
- միջանկյալ ստուգողական աշխատանքներ։

Դասընթացն ավարտվում է **ստուգարքով**, որի ընթացքում գնահատվում են ուսանողի տեսական գիտելիքները, իրավական վերլուծության կարողությունները, մասնագիտական փաստարկման մակարդակը և իրավական խնդիրների լուծման հմտությունները։

Դասընթացի թեմաները եւ ծավալները

Թեմա 1. Իրավունքից հրաժարվելու պատմական և իրավափիլիսոփայական տեսանկյունները

Իրավունքից հրաժարվելը (պատմական տեսանկյունը)։ Իրավունքից (ազատությունից) հրաժարվելը (իրավափիլիսոփայական տեսանկյունը)

Թեմա 2. Իրավունքից հրաժարվելու տեսությունը

Իրավունքից հրաժարվելու հասկացությունը և ձևերը։ Սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելը։ Սուբյեկտիվ իրավունքն իրականացնելուց հրաժարվելու հատուկ–իրավաբանական սահմանափակումները

Թեմա 3. Դատական նիստին մասնակցելու իրավունքից հրաժարվելը և քրեադատավարական միջամտության հարցերը

Դատական նիստին մասնակցելու իրավունքից հրաժարվելը (դոկտրինալ և պատմահամեմատական տեսանկյունները)։ Դատական նիստին մասնակցելու իրավունքից հրաժարվելու ընդհանուր պայմանները։ Դատական նիստին մասնակցելու իրավունքից հրաժարվելը մեղադրյալի միջնորդությամբ (համաձայնությամբ)։ Դատական նիստին մասնակցելու իրավունքից հրաժարվելը (իրավունքը կորցնելը) հակաիրավական արարք կատարելով (forfeiture by wrongdoing)

Թեմա 4. Հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքից հրաժարվելը և քրեադատավարական միջամտության հարցերը

Հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքի էությունը։ Հակընդդեմ հարցման իրավունքից (կոնֆրոնտացիայի) հրաժարվելու հասկացությունը և ձևերը

Թեմա 5. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվելը և քրեադատավարական միջամտության հարցերը

Բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվելը (դոկտրինալ և իրավահամեմատական տեսանկյունները): Բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվելը (հայկական իրականություն)

Թեմա 6. Հաղորդակցության գաղտնիության իրավունքից հրաժարվելը և քրեադատավարական միջամտության հարցերը

Հաղորդակցության գաղտնիության իրավունքից հրաժարվելը (դոկտրինալ և պատմահամեմատական տեսանկյունները):Հաղորդակցության գաղտնիության իրավունքից հրաժարվելու ձևերը

4. Գրականության ցանկ

Հիմնական՝

1. Ղամբարյան Ա. Իրավունքից հրաժարվելը և քրեադատավարական միջամտության հարցերը: Եր.: «Տիգրան Մեծ», 2018
2. Ղամբարյան Ա., Ավոյան Ք., Սուբյեկտիվ իրավունքից հրաժարումը և իրավաչափության պայմանները // Օրինականություն, 2016, № 91, էջեր 23-34
3. Տիգրանյան Ա., Մարդու հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրումից հրաժարվելը հանրաքվեի միջոցով // ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 2023, № 3 (111), էջեր 249-265
4. Զաքս Միխայել, Սահմանադրական իրավունք II: Հիմնական իրավունքներ. մաս I. Հիմնական իրավունքների տեսություն: Թարգմ. Լ. Սարգսյան, մասնագիտական խմբ. և թարգմ.՝ Վ. Պողոսյան. Եր.: Տիգրան Մեծ, 2015
5. Саркисян А., Новосельнов Д. Об отказе от права и его последствиях // Вестник экономического правосудия Российской Федерации. 2017. № 4. С. 100
6. Седова Ж. И., Зайцева Н. В. Принцип эстоппель и отказ от права в коммерческом обороте Российской Федерации. М.: Статут, 2014. Доступ из СПС «КонсультантПлюс»
7. Бойко Т. С. Отказ от права и воздержание от осуществления права: российский и англо-американский подходы // Закон. 2012. № 3
8. Гладышева И. П. К вопросу о понятии «юридический отказ» // Вестник Нежегородской академии МВД России. 2010, № 2 (13)
9. Чеботарева И. Н., Пашутина О. С., Ревина И. В. Отказ от субъективного права как феномен в уголовном процессе России. Курск, 2020
10. Саркисян А. В. Доктрина отказа от права: опыт сравнительно-правового анализа. http://pressto.amu.edu.pl/index.php/ppuam /article/view/4607/4718 (10.12.2017)

Ինտերակտիվ կայքեր՝

1. www.arlis.am
2. www.parliament.am:
3. www.concourt.am

5. Հարցեր եւ առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար

1. Սուբյեկտիվ իրավունքից հրաժարման տեսություն առարկայի օբյեկտը, առարկան և մեթոդոլոգիան
2. Սուբյեկտիվ իրավունքից հրաժարման հասկացությունը
3. Սուբյեկտիվ իրավունքից հրաժարման առանձնահատկությունները
4. Սուբյեկտիվ իրավունքից հրաժարման սկզբունքները

5. Սուբյեկտիվ իրավունքից հրաժարման նախադեպային իրավունքը
6. Սուբյեկտիվ իրավունքից հրաժարման կարգավորման այլ իրավունքի աղբյուրներ
7. Սուբյեկտիվ իրավունքից հրաժարման կիրառման տեսակները
8. Սուբյեկտիվ իրավունքից հրաժարման սահմանափակումները
9. Մարդու իրավունքների ընդհանուր բնութագիրը
10. Պետության պոզիտիվ և նեգատիվ պարտավորությունները. Իրավունքից հրաժարման առանձնահատկությունները
11. Հորիզոնական և ուղղահայաց իրավահարաբերություններ. Իրավունքից հրաժարման առանձնահատկությունները
12. Քաղաքացիական իրավունքներից հրաժարումը
13. Քաղաքական իրավունքներից հրաժարումը
14. Սոցիալական իրավունքներից հրաժարումը
15. Տնտեսական իրավունքներից հրաժարումը
16. Մշակութային իրավունքներից հրաժարումը
17. Էկոլոգիական իրավունքներից հրաժարումը
18. Կոլլեկտիվ իրավունքներից հրաժարումը

6. Ստուգումների անցկացման ձեւը եւ գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր եւ տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պատասխանի տրամաբանական կառուցում, տեսական եւ կիրառական գիտելիքների համադրում, օրինակներ բերելու ունակություն, տեսակետների պատճառաբանվածություն:

Ստուգարք. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները եւ ելույթների վերլուծության ունակությունը ստացված գիտելիքների